ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ#3

ՀՀ Գեղարքունիքի մարզի «Մարտունու բժշկական կենտրոն» ՓԲԸ կառուցման շինարարական աշխատանքներ, NCB No: CR4/NCB/B-W/007-19

Հարգելի Հայտատուներ,

Ի պատասխան, 2020թ-ի Փետրվարի 3 ARMEPS համակարգի միջոցով ստացված հարցմանը, կից Ձեզ ենք ներկայացնում հետևյալ պարզաբանումը վերոնշյալ մրցույթի վերաբերյալ («Հրահանգներ Մրցույթի Մասնակիցներին» (Բաժին I) 7.1 հոդված).

Հարց. Հնարավոր է ՀԳ-ով մասնակցության դեպքում վարկային գծի տեղեկանքը տրված լինի գործընկեր 1-ին,կամ՝ հակառակ դեպքում.
''Տրվում է համաձայն « ».02.2020թ.-ին կնքված ՀԳ-ի պայմանագրի, «Գործընկեր 1-ի անվնաումը »ՍՊԸ -ին առ այն,.....: '':
Եվ վարկային գծից բացի կարող է ներկայացվել հաշվի մնացորդ/բանկայից քաղվածքի տեսքվ/,եթե այո՝ հայտերի բացումից քանի օր առաջվա դրությամբ պիտի լինի հաշվի մնացորդը:

Պատասխան. Համաձայն «Գնահատման և որակավորման չափանիշներ» Բաժին III-ի-3. Որակավորում» «3.1 Ֆինանսական կարողություններ» կետի.
Համատեղ գործունեություն (գոյություն ունեցող կամ մտադրվող) աղյուսակի «Բոլոր կողմերը միասին» դաշտում նշված է. «Պետք է բավարարի պահանջը», նույն աղյուսակի «Յուրաքանչյուր անդամ» և «Մեկ անդամ» դաշտերում նշված է «Կիրառելի չէ» պահանջը, ինչպես նաև համաձայն վերոնշյալ Բաժնի «3.1 Ֆինանսական կարողություններ» (i) կետի.
«Մրցույթի մասնակիցը պետք է ցույց տա, որ նրա համար մատչելի են իրացվելի ակտիվներ, չգրավադրված անշարժ գույք, վարկային գծեր և այլ ֆինանսական միջոցներ (անկախ պայմանագրային կանխավճարից), որոնք բավարար են շինարարության ժամանակ դրամական միջոցների հոսքի կարիքները բավարարելու համար, որոնք՝ տվյալ պայմանագրի համար կազմում են **304,000,000 ՀՀ դրամ**՝ առանց մրցույթի մասնակցի այլ պարտավորությունների»:

*Հարց.*ՀԳ-ի դեպքում, հայտի ապահովման հայտարարագիր և մրցութային հայտ ձևաթղթերը մեկն են ներկայացվում/բոլոր կոմերը միասին/?

Պատասխան. Մրցութային հայտի ձևաթուղթը մեկն է, իսկ հայտի ապահովման հայտարարագիրը պետք է ներկայացվի համաձայն «Հրահանգներ մրցույթի մասնակիցներին» Բաժին I-ի 19.8 կետի.
«Համատեղ գործունեության Մրցութային երաշխիքը կամ մրցույթի ապահովման հայտարարագիրը պետք է լինեն այդ Մրցութային առաջարկը ներկայացնող համատեղ գործունեության անունից: Եթե համատեղ գործունեությունը իրավաբանորեն դեռ չի ձևավորվել մրցույթի ժամանակ, ապա Մրցութային երաշխիքը կամ մրցույթի ապահովման հայտարարագիրը պետք է լինեն բոլոր

ապագա անդամների անունից, ինչպես նշված է ՀՄՄ 4.1 և ՀՄՄ 11.2 կետերում նշված մտադրության նամակում»:
Համաձայն մրցութային փաթեթի՝ «Մրցութային տվյալների աղյուսակ» (Բաժին II) 20.2 կետի. «Եթե Հայտը ներկայացվել է գոյություն ունեցող կամ նախատեսվող ՀԳ-ի կողմից, բոլոր կողմերը պետք է՝ (i) ստորագրեն պարտավորություն, որ համատեղ և յուրաքանչյուրն իր հերթին կրում են պատասխանատվություն, (ii) նշանակեն Ներկայացուցիչ, որն իրավասու կլինի գործել ՀԳ-ի և նրա բոլոր անդամների անունից մրցութային գործընթացում, իսկ Պայմանագիրը շնորհելու դեպքում՝ նաև պայմանագրի իրականացման ընթացքում:
Հայտի հետ պետք է ներկայացվի գլխավոր Հայտատուին լիազորող նամակի սկանավորված պատճենը»:

*Հարց.*Բոլոր ձևաթղթերում պարտադիր է ՀԳ-ի գործընկեր-2-ի կնիք ստորագրությունը, թե միայն՝CCC,Con-2,Eli-1.1,Eli-1.2,Exp-4.1,Exp-4.2(a)(եթե իհարկե նմանատիպ պ/գիր է ներկայացվում գործընկեր 2-ի կողմից),Fin-3.1,Fin-3.2:

Պատասխան. Համաձայն մրցութային փաթեթի՝ «Մրցութային տվյալների աղյուսակ» (Բաժին II) 20.2 կետի:

*Հարց.*Ծավալաթերթի բոլոր էջերը պիտի կնքված և ստորագրված լինեն,թե միայն վերջինը(և ՀԳ,գործընկեր-2 ծավալաթերթում էլ պիտի կնքի և ստորագրի/նշեմ,որ տրվելու է լիազորագիր գործընկեր-1-ին փաստաթղթերը ստորագրելու համար):

Պատասխան. Համաձայն մրցութային փաթեթի՝ «Մրցութային տվյալների աղյուսակ» (Բաժին II) 20.2 կետի:

Հարգաքով,
Քրիստինե Ղամբարյան
Գնումների մասնագետ
ՀՀ ԱՆ «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ
ՀՀ, ք. Երևան 0051, Կոմիտասի 49/4, 5-րդ հարկ
Հեռ.՝ (+374 10) 29 75 36, (+374 10) 29 75 37
Էլ. հասցե՝ procurement@healthpiu.am, kristine.ghambaryan@healthpiu.am
Վեբկայք՝ www.healthpiu.am